Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2023թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ Հ.44 ՇԵՆՔԻ Հ.28 ԲՆԱԿԱՐԱՆԻ՝ 64,7 ՔՄ ½ ՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևանի քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Ե.Չարենցի փողոցի 44 շենքի 28՝ 64,7 քմ մակերեսով բնակարանի ½ մասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N28122022-01-0353 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ռուստամ Յուրիկի Բաբայանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ Հ.44 ՇԵՆՔԻ Հ.28 ԲՆԱԿԱՐԱՆԻ՝ 64,7 ՔՄ ½ ՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Ե.Չարենց փողոց 44 շենքի 28 բնակարանի 64,7 քմ մակերեսով ½ մասը սեփականության իրավունքով անհատույց օտարել Ռուստամ Յուրիկի Բաբայանին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 28.12.2022թ. N28122022-01-0353 վկայական):

Ե.Չարենցի փողոց 44 շենքի 28 բնակարանի 64,7 քմ մակերեսով ½ մասը համաձայան անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 28.12.2022թ. N28122022-01-0353 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Համաձայն Մյասնիկյանի շրջգործկոմի 21.06.1995թ. թիվ 11/23 որոշման և Ե.Չարենց 44 շենքի կառավարման մարմին հանդիսացող «Կենտրոն» համատիրության 10.03.2023թ. տեղեկանքի՝ վերոնշյալ բնակարանի ½ մասի համասեփականատեր է հանդիսանում Ռուստամ Յուրիկի Բաբայանը:

Վերոնշյալ բնակարանի ½ մասի համասեփականատեր, հանգուցյալ Տատյանա Հովակիմովայի մահից հետո մինչ օրս Ռուստամ Յուրիկի Բաբայանը փաստացի տիրապետում և կառավարում է նշված գույքը և կատարում է բոլոր պարտադիր նորմերի վճարները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուստամ Յուրիկի Բաբայանի և հանգուցյալ Տատյանա Հովակիմովայի միջև ազգակցական կապ չի եղել, քննարկվող բնակարանը 10.10.2022թ. ԵԴ/33751/02/21 դատարանի վճռով ճանաչվել է անժառանգ գույք և փոխանցվել Երևան համայնքին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության անձնագրային և վիզաների վարչության Կենտրոն անձնագրային բաժանմունքի կողմից տրված 20.03.2023թ. թիվ 23107107103 տեղեկանքի Ռուստամ Յուրիկի Բաբայանը (ծնված՝ 01.01.1958թ.) հաշվառված Ե.Չարենց փողոց 44 շենքի 28 բնակարանում 15.05.1974-11.07.1995թթ. և վերահաշվառված 17.03.2023թ.:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 27.12.2022թ. թիվ 694-Ն որոշման հավելվածի (ծրագրի) 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և (կամ) փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունել Երևանի ավագանու որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ Հ.44 ՇԵՆՔԻ Հ.28 ԲՆԱԿԱՐԱՆԻ՝ 64,7 ՔՄ ½ ՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Ե.Չարենցի փողոցի հ.44 շենքի հ.28 բնակարանի՝ 64,7 քմ ½ մասը անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ Հ.44 ՇԵՆՔԻ Հ.28 ԲՆԱԿԱՐԱՆԻ՝ 64,7 ՔՄ ½ ՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Ե.Չարենցի փողոցի հ.44 շենքի հ.28 բնակարանի՝ 64,7 քմ ½ մասը անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ